

**Էֆենար**

Ոչ սրոպական երկրներից եկած տարբեր ազգերի  
Հոգեբուժության Հյուսիսային – Հոլանդիա Կենտրոն

Ինֆորմացիա հիվանդների համար

### **Էֆենար**

**Էֆենարը, ոչ կրոնական երկրներից եկած տարբեր ազգերի հոգեբուժական օգնության կենտրոնը, հոգեբուժական օգնություն է առաջարկում հոգեկան պրոբլեմներ ունեցող այլազգիներին, որոնք նույնպես տառապում են ուրիշ կուլտուրաներին հարմարվելու պրոբլեմներով կամ էլ տրավմայով: Էֆենարը գտնվում է Բայլենում և օգնություն է առաջարկում Հյուսիսային Հոլանդիայի բոլոր տարիքի այլազգիներին: Այս տեղեկատվության մեջ դուք ավելին կկարդաք Էֆենարում տրվող բուժման մասին:**

### **Ու՞մ համար է Էֆենարը**

Էֆենարը հոգեբուժական օգնություն է առաջարկում այլազգիներին: Էֆենարի բուժման մեջ կիրառվում են հոգեբուժական համընդհանուր բուժման ձևեր այլ ազգային պատկանելություն ունեցող մարդկանց համար:

Համընդհանուր հոգեբուժության առաջարկած օգնությունը միշտ չէ, որ համապատասխանում է այլազգիների պահանջին: Այս հարցում շատ կարևոր նշանակություն կարող են ունենալ ազգային առանձնահատկությունները: Ազգերի մեջ եղած երբեմն մեծ տարբերությունը հնարավոր է հաղթահարել: Սակայն դա պահանջում է լրացուցիչ ժամանակ, ուշադրություն և բուժող բժշկի կողմից Տեղեկություն՝ ազգային առանձնահատկությունների մասին:

Բացի այդ, Էֆենարը հատուկ մասնագիտացած և փորձված է այն մարդկանց բուժման մեջ, որոնց կյանքում շատ դաժան իրադարձություններ են կատարվել: Էֆենարի բուժումն արդյունք կտա այն մարդկանց, որոնք վախ ունեն, անտրամադիր են, քնելու պրոբլեմներ ունեն, մտածմունքների մեջ են, մղձավանջային երազներ և մարմնական ցավեր ունեն: Նշված այս գանգատների պատճառով մարդկանց նորմալ կյանքը սահմանափակվում է: Շատ մարդիք այն զգացումն ունեն, որ դուր են եկել կյանքի հունից, որ հսկողությունը կյանքի հանդեպ կորել է:

### **Ի՞նչ է իրենից ներկայացնում բուժումը**

Կամ Ձեր ընտանեկան բժիշկը, կամ էլ Դրենտեի GGZ –ի (Հոգեբանական Առողջապահական Խնամք) բժիշկը կարող է Ձեր տվյալները ներկայացնել Էֆենար: Դրանից հետո Ձեզ կուղարկեն հրավեր՝ ծանոթության գրույց անկացնելու նպատակով: Այդ գրույցը տեղի կունենա հոգեբույժի, հոգեբանի և հավանաբար թերապեվտի հետ: Մենք կարևոր ենք համարում, որ ընտանիքի անդամները կամ էլ այլ վստահված անձինք ներկա լինեն այդ գրույցին: Անհրաժեշտության դեպքում կհրավիրվի թարգմանիչ: Այդ գրույցի նպատակը նրանումն է, որ ծանոթանաք և քննարկեք, թե ինչ պրոբլեմներ և գանգատները ունեք: Այդ գրույցից հետո կտեսնեն, թե արդյոք Էֆենարում Ձեզ համապատասխան բուժում կող է առաջարկվել:

## De Evenaar, Centrum voor Transculturele Psychiatrie

Յուրքանչյուր հիվանդի համար կազմվում է բուժման պլան: Դրանում նշվում է, թե ով է Ձեր գլխավոր բժիշկը, թե որն է Ձեր բուժման նպատակը և ինչպիսի թերապիաներ պետք է ստանաք:

Էֆենարում հնարավոր են բուժման տարբեր ձևեր:

**Պոլիկլինիկային բուժում**

Պոլիկլինիկական բուժումն անհատական բուժում է, որի ընթացքում Դուք հաճախակի գրույցներ եք ունենում հոգեբույժի, հոգեբանի կամ էլ սոցիալ-հոգեբուժական բույժքրոջ հետ: Բացի այդ, Դուք Ձեզ կարող են նաև դեղորայք դուրս գրել:

Երեխաների և պատանիների համար գոյություն ունի առանձին պոլիկլինիկական բուժում: Իսկ երբ ընտանիքում մեկից ավելի անդամներ հոգեկան պրոբլեմներ ունեն, ապա նման դեպքերի համար հնարավոր է համագործակցել Դրենտեի GGZ –ի ընտանիքների կլինիկայի հետ:

Երբեմն գրույցներն ու դեղերը բավարար չեն լինում Ձեր գանվատները նվազեցնելու համար: Նման դեպքում Ձեզ հետ համաձայնեցնելուց հետո հնարավոր կլինի լրացուցիչ տերապիա սկսել: Հաճախ խոսքը վերաբերում է ոչ խոսակցական թերապիայի կամ էլ գործունեության, որի դեպքում ոչ թե խոսելն է կարևոր, այլ մի բան անելը: Թերապիաները անցնել կացվում երբեմն անհատական, երբեմն էլ խմբակային: Թերապիաների օրինակներից են՝ պսիխոմոտորիկ թերապիա (շարժման հետ կապված), ստեղծագործական թերապիա (օրինակ՝ նկարել, թատրոն խաղալ) կամ սիստեմաթերապիա (ընտանիքի անդամների հետ միասին):

**Ցերեկային բուժում**

Ցերեկային բուժման ամենա շատ կիրառելի ձևը երկօրյա խմբին մասնակցելն է: Թերապիան սկսվում է ութից մինչև տաս շաբաթվա կողմնորոշվելու փուլով: դրանից հետո սկսվում է բուժման փուլը՝ տղամարդկանց կամ կանանց խմբում: Ծրագիրը բաղկացած է տարբեր թերապիաներից, անհատական և խմբակային գրույցներից և տևում է ամենաշատը մեկ տարի: Երկօրյա խմբից բացի գոյություն ունի նաև տարբեր այլ խմբեր, որոնք առաջարկվում են, որպես շարունակվող խնամք:

**Գործունեությունների ծառայություն**

Դրենտեի GGZ –ն ունի որվա զբաղմունքների մի շարք հնարավորություններ, որոնցից կարող են օգտվել նաև Էֆենարի հիվանդները: Օրինակ՝ Բայլենում կա բույսերի ջերմոց, հեծանիվների աշխատատեղ և ընդհանուր զբաղմունքների կենտրոն, որոնց թվում նաև տեքստիլ և փայտամշակման բաժին:

**Լրացուցիչ ինֆորմացիա**

Այս տեղեկատվությունը կարդալուց հետո հարցեր ունենալու դեպքում կարող եք կապվել Էֆենարի հետ հետևյալ հեռախոսահամարով. (0593) 53 58 42

## De Evenaar, Centrum voor Transculturele Psychiatrie

Դրենտեի GGZ  
Էֆենար  
Տարազգային Հոգեբուժության Կենտրոն  
Altingerweg 1  
Postbus 30000  
9411 RA Beilen  
Հեռ. (0593) 53 58 42  
Ֆաքս. (0593) 53 58 51  
E-mail: [deevenaar@ggzdrenthe.nl](mailto:deevenaar@ggzdrenthe.nl)

Էֆենարը տեղադրված է Վեյերդ (Weijerd) շենքում: Այն հիվանդները, որոնք առաջին անգամ են գալիս կարող են ներկայանալ քարտուղարությանը, կողքը գտնվող Էտստուլ (Etstoel) շենքի գլխավոր մուտքից ներս մտնելով:

[www.ggzdrenthe.nl](http://www.ggzdrenthe.nl)

Ի՞նչ է անում Դրենտեի GGZ-ը

Դրենտեի GGZ-ն առաջարկում է ամբուլատոր, պոլիկլինիկային և հիվանդանոցային հոգեկան վնասի բուժում: Հոգեկան վնասի բուժումն առաջարկվում է երեք տարածքային բաժանմունքներում. Հյուսիսային -Դրենտե, Հարավարևելյան -Դրենտե և Հարավարևմտյան Դրենտե: Բացի այդ, Դրենտեի GGZ-ն առաջարկում է հիվանդանոցային և ամբուլատոր դատական – բժաշկական հոգեբուժություն:

Ծերերի բուժումն ու խնամքն առաջարկվում է երկու խնամքի և երկու բուժող հաստատությունների կողմից կամ էլ այդ հաստատություններում:

Կանխարգելումը, հասարակական ծառայության ցուցաբերումն ու գիտական հետազոտությունները մտնում են Դրենտեի GGZ-ի հիմնական գործունեությունների մեջ: Դրենտեի GGZ-ն առաջարկում է մի շարք կրթություններ, ինչպես օրինակ՝ հոգեբուժական կրթություն, հոգեբուժական հոգեբան, հիվանդանոցի հոգեբան, բույժբույրական և խնամքի կրթություն:

Դրենտեի GGZ-ում աշխատում են 3000 մարդ, որոնք բաշխված են Դրենտեի տարբեր ֆիլիալներում: Տարեկան 15000 մարդ է դիմում մեր ծառայությունից օգտվելու համար:

© 2006 Դրենտեի GGZ, Ասսեն, Հոլանդիա

ZW.023P (11/06)

Այս հրատարակության բոլոր տեքստերի և պատկերների հեղինակային իրավունքը պատկանում է Դրենտեի GGZ-ին և իրավաբանորեն պաշտպանված են: Դրա ամբողջական կամ մասնակի յուրացումը, ինչ ձևով որ ուզում է լինել, հնարավոր է միմիայն Դրենտեի GGZ-ի նախնական գրավոր թույլտվությամբ: Այդ հարցով կարող եք կապվել հաղորդակցման բաժնի հետ:

Datum: 22-02-2010

Copyright 1998 -2010, GGZ Drenthe, Assen (NL). Deze informatie is afkomstig van [www.ggzdrenthe.nl/evenaar](http://www.ggzdrenthe.nl/evenaar)